

եկած յարձակման դիմադրելու համար , սովորական ժողովատեղին զօրաց՝ Բագրեւանդ կամ Մաղկոսն գաւառներն էին : Ուստի հաւանական է որ Վարդան նախ անդ կեղորնացոյց իւր զօրքելու , և այդ տեղից լրկեց զԱռանձար Ամատունին « յամենայն զօրականէն լի իմաստութեամբ և քաջութեամբ » (Եղ. Էջ 184) լրտեսելու Պարսից բանակը՝ երկու նպատակով . ա . « լրտեսել զրազմութիւն զօրացն Պարսից » . բ . « տալ զրգիռն , եթէ հնար իցէ՝ առ ի փութապէս , ասէ , զալ բերել մեզ պահա արքայութեան » : Վարդան տակաւին չէր կարող գուշակել Պարսից միտոք . որք չնայելով որ ի չէր և ի Զարեւանդ էին , սակայն խորամանկութեամբ զօրակելու համար իւրենց վերջնական ծրագրը , « գոնդ բազում հատանէր ի զօրաց նորա , ասպատակաւ արշաւէր , յաւարի առնուլ կամէր զրազում գաւառու » (Եղ. Էջ 184) : Ուրեմն Ռուսանձար իւր իմաստութեամբ պիտի իմանար և ստուգէր յարձակման ուղղութիւնն : Յանկարծակի Կ'ինկնայ Պարսից վերջապահ թեփ վերայ , և կոտորելուով՝ կը տանի մնացածն « անդէն փախստական ի բանակն արկանէր » . (Եղ. Էջ 184. Փարպ. 224) : Յաղթական վերադառնալով՝ լըրտեսութեան արդինցը պիտի պատմէր , լյոյս սփուելով թշնամոյն մութ շարժումների վրայ : Ուրեմն յետ պատմելոյ անշուշտ թէ որքան է բազմութիւն զօրաց Պարսից , պիտի յաւելուր թէ զօրագլուխքն են Մուշկան Նիւսալաւորտ և Գողգէն , պիտի ասէր մանաւանդ թէ ինչ ռազմագիտութիւն պիտի բանեցնեն այդ երկու զօրավարք , այսինքն « տային գիտել և զայն ես սոսոզոքեամբ՝ գալ հասանել ի միջոյ կողմանէ աշխարհիս » : Այս տեղ փութեացնելու խօսքն անգամ միտք չէ կարող ունենալ , վասն զի Ռուսանձարի երկրորդ նպատակն էր զրդիս տալ՝ եթէ հնար էր՝ որ փութան այն ուղղութեամբ՝ զոր Վարդան կամէր , այսինքն ի միջյ կողմանէ , ուր ինքն կեղորնացեր էր : Նա իւր յաղթութեամբ բաւականէն աւելի զրգած պիտի լինէր զՊարսիկս , ուստի նոքա ուզէին չուզէին պիտի փու-

թային : Ուստի Վարդան այս տեղեկութիւնը առնելուն պէս՝ չի սպասեր , այլ « եւս առաւել ճեպէին երթալ ընդրէմ նուցա » (Փարպ. անդ) . ոչ անոր համար որ Պարսիկը կը շումափէին , որննը արդէն « եւս առաւել ստիպով եկեալ հասանէին ի գաւառն Արտազ , հուպ ի գեօղն որ կոչի Աւրայր » (Փարպ. Էջ 226) , այլ անոր համար որ հնո՞ւս սահ անազլիի վերայ գործը վերջացնեն , և թոյլ չտան յառաջ խաղալու միջին կողմէն « հասանել յաշխարհն Հայոց սպանութեամբ և գերելով յարձակել և վասել » (Փարպ. Էջ 226-6) :

Հ . ԳԱՐՐԻԿ , ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ԽՈՅՔԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Մեր նախնիք խոյր կը կոչեն արքայական թագը . ինչպէս կը գործածեն Ս. Գրոց թարգմանիչը և ինչպէս Յովհաննէս Պատմաբան կը գրէ . « Զգեստաւորէ . . . թագաւորական զգեստու և զնէ խոյր ոսկի ընդուզեալ մարգարտով ի գլուխ նորա » . իսկ երբոր լատինական միտրը (Mitra) մտաւ մեր եկեղեցւոյ մէջ՝ խոյր բառը յատկացուցին միտրին :

Հոս Կ'ուզեմ քննել՝ նախ թէ խոյրէն առաջ ինչ կը գործածէին կաթողիկոսը պատարագի ժամուն . և երկրորդ՝ լատինական խոյրը (Mitra) երբ մտաւ հայ եկեղեցւոյ մէջ¹ :

Ա. Առաջ քահանայք և բոլոր եկեղեցականը բաց զիսով կ'աղօդէին եկեղեցւոյ մէջ , ինչպէս կը պատուիրէ Պօղոս առաքեալ : Պատրիհարքները միայն ի սկզբան կը գործածէին սաղաւարտը կամ թագը , վասն զի անոնց մասամբ մը արտաքին

1. Սփօ հարցութերն եղած են ժամանակաւ « Բաղաջանվեց » ի Ասուրանդակին մէջ (1897 Մարտ) . որոց պատմախանճ է Վերեանոց ստորագրուն՝ յաջորդ (Ապրիլ) ամսուն մէջ : Յօրուածը հմտութեամբ գրութ է . մնաք Հոս քանի մի տարբեր կաթողիկոս պիտի յայտնենք :

իշխանութիւն մ'ալ ունէին իրենց սրբազն կարգին վրայ աւելցուած . և դիտելու է որ Հռոմայ քահանայապետք աշխարհական իշխանաց , այսինքն՝ թագաւորաց խոյրը (tiaրe) կը գործածէին :

Ո՞ւ է ազգի մը մէջ սակայն սովորութիւն չեղաւ պատարազի ատեն սաղաւարտ դնել . և մերազգի քահանայց ալ՝ երկուասաներորդ դարէն առաջ՝ բաց զլիսով կը պատարագէին , ինչպէս մինչեւ հիմայ յոյն և լատին քահանայց . այնպէս որ Ն. Լամբրոնացին բաց զլիսով պատարազել կը հրամայէ . և պատարազի զգեստաւորութեան մէջ՝ սաղաւարտ կամ ու է թագ չի յիշատակուիր պարզ քահանայից գործածութեան համար :

Կրօնաւորը սակայն « Աեաւ փիլոնով և վեղարով » կը պատարագէին՝ և թերեւս Լամբրոնացւոյ զգեստաւորութեան երկորորդ ձեւը կրօնաւորաց համար է եթէ Փիլինը կրօնաւորաց յատուկ զգեստ պէտք է հասկընալ և ոչ շուրջառ — « Դնէ զբազպան և զգենու զՓիլուն » :

Իսկ կաթողիկոններն և եպիսկոպոսներն՝ երկուասաներորդ դարուն միտր կամ խոյր կը զնէին զլուկնեն պատարազի ժամուն : Ն. Լամբրոնացին կը գրէ . « Յորժամ զիսյոյն զնէ եպիսկոպոսն՝ » , և այն . և նոյն ինքն Լամբրոնացի իր ոտանաւոր ներբողին մէջ՝ կ'ըսէ թէ Գր. Պահաւունի կաթողիկոսը զներսէս Շնորհալի իր տեղը կաթողիկոս ձեռնադրեց .

1. Հմմուն . Հ. Աւելանի Սիսուանի մի պատկերը յէջ 455:

2. Հմմուն . Մեծիսաթիւն Պատարազի , ուա . ի Վեճեստ . էջ 89:

3. Հմմուն . Անդ . էջ 194:

4. Տես այս մասին Հ. Ա. Հացուււոյ Ս. Պատարազի որդը գործը . ուա . ի Ենեկուիք . 1899 , էջ 67:

5. Հմմուն . Անդ . էջ 194:

6. Որ է Վիպատանութեան զներսէս Շնորհաւոյ . ապուած . Ն. Շնորհաւոյ ընդհանրական թղթաց հետ ի Սանկույտուրուուր , յամի 1788:

7. Ցայ Պատրիարքը և եպիսկոպոսներ միայն կը դործեն սաղաւարտը : Երբ հայ եպիսկոպոսը միտր առին , քահանայց ալ սաղաւարտ սկսան դնել զլուկնենին Պատարազի ժամուն :

Գլուխ հանուրց զինտրեալն օծէր , Յալթիպղ ընդ իւր նըստուցանէր , Կըրկնամածեալ քող արկանէր , Եւ գաւազան ի ձեռն զընէր , Բազմախաչեան զգեցուցանէր , Եմիփորոն զլանջօցն ածէր , Փեսայապէս զարդուց պըճնէր , Գիլիոյն պրակ Քրիստոս նըստէր » .

Այս յիշած պակն՝ է ապահովապէս միտր կամ խոյր :

Ժի գրան առաջ չենք գիտեր թէ ինչ կը գործածէին կաթողիկոսը և եպիսկոպոսը . բայց հաւանականաբարա , եթէ քոյէն դուրս ուրիշ բան մը կը գնէին իրենց զըլուիր , սաղաւարտը պիտի ըլլար , առնուած թոյներէն՝ Ակայն նկարներուն մէջ՝ զգեստաւորուած կաթողիկոսին կամ եպիսկոպոսին զլուկը՝ սպիտակ վեղար կը նշմարենք : Եւ ինձ ամենահաւանական կը թուի որ կաթողիկոսը՝ Եղին պատրիարքին սաղաւարտը երբեք զլուկնին դրած չեն . ասոր փաստ կը համարիմ Մատթէոս Աւուհայեցւոյ մի բանի օրինակներէն հետեւեալը . « Տէ՛ Գրիգորի յուղարկեաց զրոյն և զգաւազանն և զսուրբ նշանն տէր Պետրոսի՝ առ տէր Արքիս » , ի նշան հաստատութեան կաթողիկոսական պաշտօնին . Եթէ ու է թագ գործածէին կաթողիկոսը՝ զայն պէտց էր զլուկը Գրիգորիս :

Բ. Միտրայի՝ կամ լատին խոյրի գործածութիւնն հայ եկեղեցւոյ մէջ՝ Գրիգոր Գ. Ակայանէրին օրով եղած է ու ոչ Գրիգորիս :

Բ. Միտրայի՝ կամ լատին խոյրի գործածութիւնն հայ եկեղեցւոյ մէջ՝ Գրիգոր Գ. Ակայանէրին օրով եղած է ու ոչ Գրիգորիս :

8. Հ. Գաթթեռեան-Տաշեանի « Արքազան պատարագամատուցք Հայոց գործը . էջ 738 : Ալդ հարքին մէջ կաթողիկոսը պահանգ վեղար դրած է և սպաշտաման զգեստով . և վեղարին վրայ խաչ մը կայ : Ալդ նկարին օրինակը շատ համանական է որ Երկուասաներորդ դարէն առաջ գրած Մատոսցէ մը պատարացէ է , երբ դեռ միտրը չկար : Ալդուն այս պահանգ վեղարը սպիտակ տագէն առած է . գետ քննելի կէտ մ'է :

9. Աղմամարայ Ս. Խաչի հյաւակատիկին նկարագրութեան մէջ կը պատմուի , երբեք թէ Գեորգ կաթողիկոսը Գագկաս առջեւ կը զնէ « Ալֆ Լուսաւորչին , զգաւազան և ԱՄԻՒ Հայապատ . Յօդ . 226 » : Ալդ գործթիւնը՝ ինչպէս յայսանի է վերըն դարերը մէջ ապրողի մը դորձն է . որով բնաւ նշանակութիւն շուրջ Միտրի նկատմամբ :

Ցղայի (1185), ինչպէս ցարդ կը կարծուէր։ Շատ յայտնի է թէ Գրիգոր Տղայ՝ Լուսիոս պապէն Խոյր ընդունեցաւ. բայց ասկից առաջ՝ նոյն Հռովմայ պապը՝ Գրիգորի՝ Ներսէս Շնորհաւոյ եղրօր՝ կուղարէկ առաջին անգամ լատին Խոյրը։

Ն. Լամբրոնացին կը պատմէ Շնորհաւոյ վարքին մէջ. Հռովմայ քահանայապետը լսելով Գրիգոր Գ. հայ կաթողիկոսին վըրայ գովեստներ՝ անոր զաւազան և հայրապետական քօղ կը դրէկ¹։ Թօդին հետ կամ քողին տեղ՝ Խոյր դրկած պէտք ենց համարիլ. որովհետեւ Հռովմայ պապը իրեն յատուկ պաշտաման զգեստները զրկելու սովորութիւն ըրած է միշտ, և քօղը իրենց մէջ չկայ. դարձեալ, Ներսէս Շնորհալի՛ որ այդ ատեններն իր եղրօր քով էր՝ սատողերը կը գրէ անոր մասին.

« Զիրիգորիս յառաջ ածեալ ...»

Նոր Աշարոն խորիս ալբնեալ²։ Եւ մեր մատենալարանի մէջ եղած ժամանակագրութիւն մը (անծանօթ հեղինակ) ունի (1161) « Պապն Հռովմայ առաքեաց զՊապն իւր՝ տէր Գրիգոր կաթողիկոսի »։

Հռովմայ քահանայապետները սովորութիւն ունէին իրենց արքեպիսկոպոսներուն

1. Լամբրոնացւ տողերն են.

« Ե՞ճն ի Հռովմ լուրին հասեալ
Առ հայրաբանն որ անդ նըստեալ.
Նա՞ գաւազան և զոյ լընեալ
Գրով ըստերն պահնչեալ »։

(Տես Ըստանականք Ներս. Շնորհաւոյ. որուն հետ տպած է նաև ն. Լամբրոնաց զՊապանութեան, որ է ստանաւոր Վարք Ն. Շնորհաւոյ) տպ. ի Անկապետորուր 1784։

2. Ներսիս Շնորհաւոյ Բանք յափառ. Վ. Անեսիկ, 1880, էջ 545։

պալիում դրէել, ի նշանակ հաստատութեան անոնց աստիճաննին և պաշտօնին. այսպէս, երբ Հռովմ յարընչութեան մէջ մտաւ կիլիկիոյ կաթողիկոսական աթոռոյն հետ սկսան միտր դրէել հայ կաթողիկոսին։

Լուսիոս Գ. 1185ին Գրիգոր Փիլիպպուպուսոյ եպիսկոպոսը կիլիկիոյ կը դրէէ առ Գրիգոր Գ. Տղայ, յանձնելով անոր իր խսկ Խոյրը՝ Հայ կաթողիկոսին համար³։ Փահանայապետին նամակը այսպէս կը թարգմանէ Ն. Լամբրոնացի. « Ծնոփորոն քեզ, եղբայր կաթողիկոս. Պալին, որ է առաջին ամենայն պատուոյ. և Խոյր զիմոյ զինյոս առաքեցի զգեստ պայծառութեան եկեղեցւոյ »։ Վարդան պատմագիրն եւս կը յիշէ սոյն դէպքը (Հմտ. էջ 134, տպ. ի վենետ.)։ Եւ Ամ. Օրբէլեան (գլ. կլ.) կոստանդին կաթողիկոսի հանդերձաւորութիւնը նկարագրելով՝ կ'ըսէ. « և զրագին պատուական եղեալ ի գլուխն »։ Սակայն լատինական խոյրը կամ միտրը միայն կաթողիկոսաց յատուկ էր Ժի-Ժի՛ դարերուն. և Ամենաց մետրապոլիտը իսկ զայն գործածելու իշխանութիւն չունէին⁴։

Հ. Մ. Պատութան

8. Ահաւասիկ թէ իւ կը դրէ Ն. Լամբրոնացի իր 1185ի յիշառակարանին մէջ. « ի թուին Հայոց ՈՒ.Դ (1185) եկն Գրիգոր եպիսկոպոս ի Հայրաբանէն Հռովմայ Լուսիոյ՝ առ կաթողիկոս մեր Գրիգորիս, որ եր ի մանե առաքեալ, և երեր զպատասխանի տեսանս մերը և զիրոյ կարգաց եկեղեցւոյ ... լու ընկալեալ կաթողիկոսի սրբոյ զՊալեանն և վայոյը ի լրաց պատուոյ իւրոյ գոկացաւ, և այնու 4. Տես Աթենաց Սարգիս մետրապոլիտին (1837) պատկերը ժամանակակից Աւագ Տաղկողէ մը նկարուած (Հմտ. Սիսական, էջ 21).

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՂԻՂԻ ԽՈՅՐԻ ԽՈՅՐԻ ԽՈՅՐԻ

ԳՐԱԴԱՐԱՆ ԲԱՑՔԵՐԵՐԳԱԿԱՆ. — Շարք մը թուակարգեսլ ըմտիր ԴՐԱՄՄԱթերու և ԶԱՆԵՑՑԱթերու Բատորիկները, որոնք կը բովանդակեն տղայոց համար ըթեցրմամ և դպրոցակամ թատրոնական մեր կայացմանց համար հաղողի, իմբարակի և թարգմանամաթեատրու, — չըստարակուած կը նիստեւալ հատուրինը.

1. Ս. Դուշինիկ նշանակութիւնը գերին. (Տ Արարուածով զբաժանաւ)։

2. Խաղամուու. (Տ Համբէսով զբաժանաւ)։

3. Երեք ԶԱՆԵՑՑԱթիւն. — Ա. Երեք ճարայակեներ (1. Արարուած)։

— Գ. Գոյցուած սապը (2. Արարուած)։

Ամէն մէկ հատորիկին գիմ է ֆ. 0.50.